



ՈՉ-Ց ԼՐԱՆՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԿԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԻ

AVEDARANI TSAIN

AN ARMENIAN RELIGIOUS MONTHLY

Բ. ՏԱՐԻ

ՅՈՒՆԻՍ 1940

ԹԻԻ 6



«Սուկեցանք... քին, Տէր, ազատե մեզ, տես
կը կըստինք... Այն տունն էլաւ հովերուն ու ծովուն
սասունց, եւ մեծ խաղաղութիւն եղաւ»:

ԿԱՐԵԻՈՐ ԿԷՏԵՐ ԹԵՐԹԻՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

1.— Մեր նշանաբանը.— Էսկան կեսերու մէջ միութիւն, ոչ հսկան կիսերու մէջ ազատութիւն, իսկ ստեղծ քանի մէջ սէր: — Օգոստինոս

2.— Եպստակը.— Ծառայել Քրիստոսի արքայան դասին: Պայքարիչ մոլորութեանց դէմ: Տարածել Աւետարանի ճշմարտութիւնը, Քրիստոսի ճիշդ փրկութիւնը քաջարար արեան շնորհիւ: Ենչեղ ապաշխարութեան եւ վերսին ծնունդի անհրաժեշտութիւնը՝ Աստուծոյ Թագաւորութիւնը մտնելու: Մղել փրկուածները արքագործուած կեանքի եւ այսպէս պատրաստել զանեւ Քրիստոսի փառաւոր վերադարձին:

3.— Դաւանանքը.— Կը հաւատայ (1) Սբ. Գրոց Աստուծոյ եւեղնչեալ, անխաղաղական եւ հաւաստի ու կեանքի կանոնը բոլորում: (2) Անկենսաւոր երրորդութեան: (3) Քրիստոսի Աստուծոյութեան: (4) Սբ. Հոգւոյն անձնաւորութեան: (5) Վերսին Ծնունդի: (6) Սրբագործութեան եւ Սբ. Հոգիով մկրտուած կեանքի: (7) Մեր Տիրոջ կրկին, անձաւք վերադարձին: (8) Մեղեցիներու յարութեան: (9) Ընդհանուր դասաստանի: (10) Սրբոց՝ Քրիստոսի հետ քաղաւորութեան: (11) Երկինքի եւ դժոխքի: (12) Սասանային անձնաւորութեան, բարի եւ չար հեղշակներու գոյութեան: (13) Արդարեւեւեւ հասարակ յաշիսեհական կեանքի, իսկ ղեղաւորներուն համար՝ յաշիսեհական սանջակքի: (14) Եկեղեցւոյ միասնականութեան եւ անոր վերջնական յաղթանակին:

4.— Կը հրատարակուի իբր ոչ-յարանուանական անկախ կրօնական ամսաթերթ, հայերէն եւ հայաստան թուրքերէն լեզուներով:

5.— Աշխարհիկ ծանուցումներ չեն ընդունուիր:

6.— Յօդուածներ կ'ընդունուին անոնցով, որոնք հոգեւոր կեանքի անձնական փորձառութիւնը եւ դուրսէն եկողներէն ալ բարի վկայութիւն ունին, կը յարգեն քերթին ուղղութիւնը եւ զրկուած յօդուածները կը ծառայեն հետապնդուած նպատակին:

7.— Թերթիս սիւնակները տրամադրելի չեն վիճաբանական նիւթերու համար երբ անոնք պարզապէս վեճեր յարուցակու կը ծառայեն եւ ոչ քի ընդհանրութիւններու:

8.— Զերտարարութեամբ յօդուածներ եւ չեն վերադարձուիր:

9.— Բաժանորդագրութիւնը կանխիկ է եւ վեց ամիսէն նուազ պայմանաւորով քաղաքացիութիւն չընդունուիր:

10.— Եղած հարցումներուն պատասխանելու կամ չպատասխանելու իրաւունքը կը վերապահուի այդ սիւնակը փարողին:

ԽՄԲԱԳԻՐՆԵՐ

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ.— Բոլոր դրամական ստամբուներ, յօդուածներ եւ թղթակցութիւններ պէտք է հասցեագրուին հետեւեալ կերպով.—

K. T. SARIAN

2, Rue Ahmed Pacha Hasanen — Shoubra, CAIRO (Egypt).

ԱՒԵՏԱՐԱՆԻ ՁԱՅՆ

ՈՉ-ՅԱՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԿԱՆ ԿՐԾՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

AVEDARANI TSAIN

AN ARMENIAN RELIGIOUS MONTHLY

Արամատէր՝ Խ. Թ. ՍԱՐԳՍՆ. —:— Propr. Rev. K. T. SARIAN

Խմբագրեցեր

Վեր. Խ. Թ. ՍԱՐԳՍՆ.

Վեր. Թ. ԷՌՏՈՐ Ե. ՏԱՂԼԵԱՆ.

Պր. Կ. Ե. ԹՈՒՄԱՆՅԱՆ.

Բ. ՏԱՐԻ

ՅՈՒՆԻՍ 1940

ԹԻՒ 6

ՅԱՂԹԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Ա.

Աճնա Ուրբեղ Սմիթի իր «Երջանիկ կեանքի գաղտնիք» գիրքին մեջ կը պատմէ թէ՛ մեկը իրեն սա՛ դիտողութիւնը բրած է. «Դուք Բիսոնեաներդ, բստեր է աճ, կը բուսի թէ կրօնք մը ունիք որ ձեզ բուսառ կ'ընէ: Դուք կը նմանիք գլխու ցաւ ունեցող մեկու մը՝ որ չուզեր հրաժարիլ իր գլուխէն, բայց պանելն ալ զինքը կը տառապեցնէ: Զեք ակնկալել որ դուրսիցները շատ փափաքով հետախուս րլլան այնպիսի բանի մը, որ զիրենք անհանգիստ պիտի ընէր»:

Ասիկա մեկ խոսք պատկերն է այժմու Բիսոնեաներուն մեկ խոսքը զանգուածին ապրած կեանքին: Շատ մը Բիսոնեաներուն ապրած կեանքը հեռու է ուրախ եւ յաղթական կեանք մը րլլալէ: Անոնք շատ ցած մակարդակի մը վրայ կը կենան: Կեանքներու այս ողբալի անկումին մեջ մեծ դեր մը կ'ունենան արհեստով Բարոյիչներուն սովորեցական, եւ առարկելի նկարագրով հոգեւորականներու ծանծաղ ուսուցումները:

Աւաղելի է յոյժ այս պարագան: Նկատեցե՛ք «փրկուած եմ» ըսողներէն շատերուն կեանքը, չէք կրնար ըսել թէ ո՛ւր անոնք կը տարբերին անպաշարներէ: Անոնք շիտակ չեն Բալեւ, դարձողարձիկ է նամբանին: Մեկ աչքով աշխարհ կը նային, միւսով՝ երկինք: Ոսկերինք դրած են Սրոն տանող ուղիին վրայ, սրտերինք դեռ կառչած կը մնայ աշխարհիկ իրերու: Մարմինը եւ հանոյցները տակաւին մեծ հրապոյր ունին անոնց համար: Փոխն ի փոխ կը յաղթեն ու կը պարտուին, աւելի յաճախ կը պարտուին քան կը յաղթեն: Աշխարհէ զատուած են, զայն եւ իր տուած հանոյցները չեն կրնար վայելել, պէտք եղածին չափ փարած չեն երկինքի գայն վայելելու համար, հետեւաբար զրկուած են անկէ ալ: Անհամ եւ անհանգիստ մըն է ասիկա, եւ տառապանք գլխու ցաւու պէս: Այսպիսիներ ցերեկն այս անկարգութիւնը պարտելու համար մեծ ուշադրութիւն կ'ընեն դուրսէն յաւ երեւնալու, ցերեկն փութիւնը ծածկելու կ'աշխատին շարեւթով դուրսի մասը: Մտիւ անոնց ցերեկն կեանքին, անա նեխած է անիկա: Ընհանքիքն դուրս հրեշտակ, ընհանքիքն ներս՝ հոգեւորներ եւ նիւաղներ են անոնք:

Սակայն ասիկա՞ է Բիսոնեական կեանք կոչուածը: Երբ Յիսուս իր քանկագին կեանքը զոհեց մեզ ազատելու մեղաց կեանքէ եւ անով քառն ըս-

սրկացումէ, մասնակի ազատութիւն մը տալ եւ նպատակը: Ան բողոք ու իր ազատամբ տուա՞յսի սաժանելի պայտարի մը մէջ անվերջ: Արդեօք Յիսուս վախճաւ՞ թէ իրեններուն շարունակական յաղթութիւնը արտա պիտի բերէր իրեն: Ի՞նչ կը նշանակէ «*Մեր թշնամիներուն ձեռքէն ազատելը*» խօսքը, եթէ պիտի զտնուի բեժամի մը որուն ձեռքէն ազատելը անհնար է: «Անով մեզ միշտ յաղթող կ'ընէ» խոստումը կը նշանակէ՞ թէ երբեմն յաղթող եւ երբեմն ալ պարտուող կ'ըլլանք: Ի՞նչ է իմաստը «*Առհն թանկերու մէջ ալ աւելի յաղթող կ'ըլլանք*» աւելի ուր մեզ սիրեց» հրաշալի խոստումին: «*Առհն թանկերու մէջ յաղթող ըլլալ*», *կարգ մը թանկերու մէջ պարտուած ըլլալ* կը նշանակէ: Վերջապէս, «*Բոլորովին կարող ե յիշկելու*»(*) խօսքը, խեղճուկիւրակ փրկութիւն մը կը յայտնէ: Որոշ է որ այս բոլոր հարցումներուն պատասխանը ժխտական է: Սոյն համարները մեզի կը պարզեն լիակատար յաղթական կեանք մը: Տերը չէր կրնար աւելի պակասը տալ մեզի, եւ չափեցաւ իրենց մեր վրայ անկէ պակասը: Ան միշտ կատարեալ գործ տեսած է: Երբ կը բռնէր բորոտ մը, կը մաքրէր կատարեալապէս: Ան կ'երբար եւ ցոյց կու տար ինքզինքը բռնանային, բոս օրէնքի, եւ բանական կրկին ու կրկին, ուշի ուշով կը մտնէր յետոյ կը հոշակէր զայն բոլորովին բուժուած եւ մաքրուած: Տարբեր պիտի ըլլար եթէ մաքրուածին վրայ մնար դեռ ետ մը, նշաններէն մէկը հիւանդութեան ներկայութեան: Ո՞վ պիտի հաւատար աղօթիկի բժշկութեան մը երբ տակաւին էրուրք մը կը յամառի մնալ բժշկուածին վրայ: Ո՞ր, իրականութիւնը տարբեր էր, սակայն, ոչ մէկ հետք մնացած էր հին ախտէն մարմնոյն վրայ բժշկուած բորոտին: Լիակատար բուժում կատարած էր Յիսուս:

Արդեօք աչները բացուած սա՞ կոյր ինչպէ՞ս կը տեսնէ: Տկարութիւն մը չունի վրան, երբեք աչներ չի՞ բռնիր: Ոչ, կ'ըսեն ճանչցողներ, Յիսուս անոր տուաւ գոյք մը փայլուն գեղեցիկ աչներ: Իսկ սա անդամալո՞յժը. որ առաջ տեղէն չէր կրնար շարժիլ առանց որ ուրիշ մը իրեն օգնէր, այժմ կրնա՞յ կոր անբացուողով փայլել: Անբացուող, փայլել՝ կը հարցնեն զարմացած զինքը Յիսուսի բերող բարեկամները, ան կը ցատկէ եղբիկի պէս:

Արդ, կարելի է խորհիլ թէ, Յիսուսի կատարած բոլոր հոգեկան բժշկութիւններէն ալ այսպէս կատարեալ եւ ամենապակաս եւ անոնց վրայ որոնք իրենց զիրենց շիտալի կը յանձնեն Յիսուսի՝ մաքրագործումի համար: Մեր Տերը րոտաւ. «Ես եկայ որ կեանք ունենան եւ ա՛լ աւելի ունենան»: Պօղոս կը հաւատար աղօթիկի կեանքի մը եւ կը հարգէր զայն ինչպէս տեսնէ մեզքերուած համարներուն մէջ: Զօրաւոր կերպով կը յանձնարարէր «բոլորովին սուրբ ըլլալ»: Ուստի կը տեսնենք թէ կա՛յ կեանք մը եւ ալ աւելի կեանք մը, սուրբ ըլլալ եւ բոլորովին սուրբ ըլլալ, փրկուիլ մը, բոլորովին փրկուիլ մը(†): Ուրեմն ինչո՞ւ հաւատացեալներ կը բաւականանան իրենց ունեցած վիճակ կեանքով, երբ խոստացուած է զօրաւոր, քիչով կը գոհանան երբ առաջ եւ նոյն կեանք մը կայ: Գո՞հ է Յիսուս քիչօտեաններու այս կեանքէն, իրենց գո՞հ են այս կեանքէն: Դժգոհ է Յիսուս, դժգոհ են իրենք, դժգոհ է զիրենք ներս ընդունող եկեղեցիներ, դժգոհ են անապաշխարներն ալ:

(Շարունակելի)

Խ. Թ. Ս.

(*) Վերոգրեալ համարներուն տեղը (Ղուկ. 1. 74, 1 Կոր. 15. 57, Հռ. 8. 37, եբր. 7. 25):

(†) Տես համարները (Յովն. 10. 10, 1 Թես. 5. 23, եբր. 7. 25):

ԱՌԱՆՁՆԱԿԱՆ ԱՂՈԹՔԸ

Առանձնական աղօթքը՝ հոգեւոր կեանքի նախնական պայմաններէն և միեւնոյն տառն անոր զոյւթեան տմենազօրաւոր ապացոյցներէն մին է։ Հաստատեցաւ՝ Աստուծոյ հետ անհատական հաղորդակցութիւն մ'ունի։ Ան ունի պարտականութիւններ, անհատական պէտքեր, և կ'զգայ թէ՛ առանձնաշնորհաւ ի մօտենալու Աստուծոյ և խօսելու Անոր՝ տառնց մասին։

Յիսուս ըստ. «Իսկ երբ դուն աղօթք կ'ընես, մօր քու ներքին սենեակդ ու դուռդ գոցէ...»։ Բնագրին մէջ «նեւթին սենեակ»ը կը նշանակէ խցիկ մը, մթերանոց կամ շտեմարան մը, մէկ խօսքով ու է գաղտնի վայր մը։ Կարգ մը մեկնիչներ այն գաղափարը կը յայտնեն թէ՛ մեր Տէրը առանձնական աղօթքի համար այսպիսի տեղեր առաջարկեց զխառնաւոր կերպով, որպէսզի, մարդիկ չտարկեն ըսելով թէ՛ մասնաւոր տեղ մը չունին առանձնաշնորհով աղօթելու։ Իսկապէս աղօթքի վայրը տարբերութիւն չընեն, ամենակարեւորը մտքի և հոգիի վիճակն է։ Աշխարհի վրայ, հաւատացեալի մը համար աղօթելու անյարմար տեղ մը չի կայ։ Պողոս կ'ըսէ. «Արդ կ'ուզեմ որ այդ մարդիկ ամեն տեղ աղօթք ընեն...»։

Աստուածաշունչի մէջ առանձնական աղօթքի համար յատկացուելիք ժամանակի մասին բան մը չիշուած չէ, սակայն յարմար և պատշաճ տեղեր առաւօտեան պահն է, երբ անհատը տակաւին իր առօրեայ գործը չէ ըստանձնած։ Օրուայ ընթացքին ան պիտի հանդիպի ամեն կերպ դժուարութիւններու, վտանգներու և փորձու-

թիւններու, որոնց զիմադրելու համար Աստուծոյ ոյժ և իմաստութիւն կը խնդրէ։ Ուրիշ յարմար տեղն մը, իրիկուն պահն է, երբ անհատը գործէն կը վերադառնայ, և անկողին չի դադարձ՝ առանձնաշնորհով շնորհակալութիւն կը յայտնէ Աստուծոյ, Անոր պարգեւած բոլոր յաջողութիւններուն համար։ Իսկ անոնք որ չեն կրնար այս երկու պահերէն մէկը յատկացնել աղօթքի համար, օրուան ու է մէկ տառնը կրնայ նուիրել այդ նպատակին։ Գալով աղօթքի յատկացուելիք ժամանակի տեղութեան՝ այս մասին ալ որոշ բան մը սահմանուած չէ, և ու է օրէնք մըն ալ չի կրնար դրուել, ինչու որ, տարկա նման ուրիշ քրիստոնէական պարտականութիւններու՝ բոլորովին ձգուած է անհատին, իր պարտականութեանց հանդէպ ունեցած գիտակցութեան և Աստուծոյ հանդէպ տածած իր սիրոյ և երախտագիտութեան զգացումին։ Մարթին Լութէր ամէն օր երկու ժամ զուտ առանձնական աղօթքի կը յատկացնէր, և այդ իսկ քիչ կու գար իրեն։ Այժմ շատ փորձութիւններ կան առանձնական աղօթքը ձեւակերպական դարձնելով անոր շատ քիչ ժամանակ տալու։ Ոմանք այնքան զբաղած են իրենց առօրեայ գործերովն ու հոգերով որ այս սրբազան առանձնաշնորհումի հանդէպ իրենց ունեցած դոյզն սէրն իսկ գրեթէ մարելու վրայ է, այսպէս իրենց հոգեւոր կեանքը կը սկսի զաղջ վիճակ մը ստանալ։

Յիսուսի, առանձնական աղօթքը հաւատացեալի կեանքին չափանիշն ըլլալով՝ ան պարտի մասնաւոր հոգածութիւն ունենալ այս ուղղութեամբ։ Առանձնական աղօթքի մասին կ'ուզենք մի քանի ուղղութիւններ տալ, որոնք կրնան օգտակար ըլլալ ընթերցողներուն։

1. Զեւակերպութիւնով մի գոհա-
նար. —

Մի մոռնար թէ՛ ա՛յն անձը որուն
հետ կը յորտաբերիս և կ'աղօթես Անոր՝
«երկիւմունք» երբ ու սիրտերը կը
քննէ»։ Աստուած զայրացած կը գտն-
գատի հրեաներէն՝ ըսելով. «Այս ժո-
ղովուրդը միայն չըթուենքներովը զիս
կը պատուէ, բայց իրենց սիրտը հե-
ռացած, զատուած է խնամէ»։ Պաղ,
անսիրտ և ձեւակերպական աղօթքը
որքան կը նախատէ զԱստուած, նոյն-
քան և աւելի Ֆլաստկար է մեր անձե-
րուն։ Մեր աղօթքներն են որ մեծա-
պէս կը նպաստեն և կամ ալ կը ֆլա-
սեն մեզի։ Քրիստոնէութեան մէջ ա-
մենապիղծ և ամբարիշտ բանն է կեղծ
և անհոգի աղօթքները, որոնք նման
են մեռեալ անասուններ զոհաբերելու
կենդանի Աստուծոյ։ Անոնք չէ թէ
միայն անընդունելի են Անոր, հապա
կը կարծրացնեն սիրտերը անոնց՝ ո-
րոնք այսպիսի աղօթքներ կը մատու-
ցունեն։ Ոմանք՝ իրենց մատուցած
կեղծ և ձեւակերպական աղօթքներով
չառ տուած են հոգեւորապէս։ Զկայ
սեւ է բան մը որ Աստուծոյ հանդէպ
մեր ունեցած ակնածանքն ու պատ-
կաւորքը նաեւ գեցնէ՝ որքան մեր
անհոգ կերպով ու զղած խօսքերը Ա-
նոր, որպէս աղօթք։ Այն ծառան որ
իր Տիրոջ հետ սովորաբար անպատ-
կաւ կերպով կը խօսի, կը քանդուի
հնոգանդութեան սկզբունքը։ Ուստի
ամեն մէկ հաւատացեալ պարտ է մե-
ծարանքով մօտենալ Անոր, ինչու որ
Ան «նախ անձոտ Աստուած» մըն է։

2. Աղօթքները պե՛տ է բոլորովն
առանձնական ըլլան. —

«... Մտիր քու ներքին սենեակդ
ու զուռդ գոցէ»։ Ու եւ է անձ մը պէտք
չէ գտնուի հոն՝ ուր առանձնացած ես

աղօթելու. — նոյնիսկ մասնակի մը
ներկայութիւնը կրնայ ներամփոփ-
ման արգելք հանդիսանալ։ Պէտք է
առանձին ըլլաւ Աստուծոյ հետ։ Եթէ
ձեւակերպութիւն եղած ըլլար աղօթ-
քը, կատարեալ առանձնութեան հարկ
պիտի չըլլար։ Քանի որ աղօթքը
բնոյթով հոգեւոր է, ուստի, կը նշանա-
կէ՝ ըսնալ Անոր մեր սիրտերը, պատ-
մել մեր վիշաքերը, տանիլ Անոր մեր
հոգերը, խոստովանիլ մեր թերու-
թիւնները, ներկայացնել մեր աղեր-
սանքները, մատուցանել Անոր մեր
չնորհակալութիւնները։ Առանձնական
աղօթքը՝ ոչ մէկ օտար ակնաւոր սահ-
մանուած է, հապա միայն իրեն։ Ա-
նոնք որոնք կը գոհանան միմիայն
ուրիշներուն առջեւ ծնրադրելով՝ մի
քանի խօսքեր կրկնել որոշեալ տեմ-
ներուն և չեն խորհիր գաղտուկ տեղ
մը առանձնանալով Աստուծոյ հետ
ժամանակ անցնել, կամ չունին բան
մը տանելու և խօսելու Անոր, բաներ
որ միայն ինք պէտք է լսէ և ոչ ու-
րիշներ, այսպիսի անձ մը երբեք հա-
կցած չէ աղօթքի նշանակութիւնը։
Անիկա կրնայ աղօթքի կերպարանք
ունենալ, սակայն չի գիտեր անոր զո-
յութիւնը։

Աստուածաշունչի մէջ՝ առանձնա-
կան աղօթքի մասին չառ մը գեղեցիկ
օրինակներ ունինք։ Իսահակ առան-
ձին արտերը կ'երթար, բնական է ա-
ղօթելու։ Յակոբ առանձին՝ աղօթքի
մէջ Աստուծոյ հրեշտակին հետ գոտե-
տեմարեցաւ։ Մովսէս առանձին՝ Աս-
տուծոյ աղօթեց վառող մացառին
քով։ Դաւիթի աղմոսներուն մեծա-
մասնութիւնը առանձնութեան մէջ
գրի առնուած աղօթքներ են։ Նախա-
նայէլ՝ իր սիրտը բարձրացուց Աստու-
ծոյ երբ առանձին նստած էր թզենիին
տակ։ Պետրոս՝ տանիք ելաւ աղօթե-

լու: Յաճախ մեր Տէրը ինքը՝ կ'երթար լեռները և պարտեզները ազօթելու համար առանձին:

3. Աղօթքները պէտք է ըլլան որոշ բաներու համար. —

Առանց ո եւ է որոշ նպատակի պէտք չէ մօտենալ շնորհաց գահուն: Շատեր կը քաջուին իրենց ներքին սենեակը աղօթելու պարզապէս ըստ սովորութեան: Այսպիսիներ կ'աղօթեն իրենց մտքին հանդիպած ո եւ է բանի մը մասին: Աղօթքէն վերջը՝ եթէ իրենց հարցուի, չեն կրնար նոյնիսկ խօսք մը յիշել իրենց աղօթածներէն: Այսպիսի աղօթքները իրական և արդիւնաւոր չեն կրնար ըլլալ: Ի՞նչ պիտի խորհինք այն անձին մօտին, որ կը գիտէ զատաւորին տօնաց ո եւ է որոշ աղերսանքի, և կամ կը մանէ վաճառատուն մը առանց որոշ գաղափար մը ունենալու թէ՛ ի՞նչ պիտի գնէ: Ահաւաստի շատերուն աղօթքները ասոր կը նմանին, և այս պատճառաւ անոնք կը բողբոջան անկապ և անիմաստ խօսքերէ և կամ զեզերուն խորհուրդներէ, որոնք ինքնին աղօթքի ո եւ է հանգամանք չունին: Աղօթքի չի կեցած հաւատացեալը իր մտքին մէջ պէտք է հաստատ և որոշ գիտնայ թէ ի՞նչ պիտի խնդրէ Աստուծոյ: Անիկա պէտք է որոշ նպատակով մը մօտենայ Աստուծոյ, որպէսզի, իր խորհուրդներն ու զգացումները կարենայ կեդրոնացնել իր աղերսին վրայ, և միայն այս կերպով կարելի է աղօթքները զերծ պահել ձեւակերպութենէ:

Վեր. ԹԷՈՏՈՐ Ե. ՏԱՂԼԵԱՆ.

Ծառի մը դէպի երկինք լաւագոյնս աճումը՝ ուղիղ կը համեմատուի անոր նեցած արմատին խորութեան հետ: Նմանապէս հաւատացեալ մը իր խոհարարութեան չափովը կը բարձրանայ դէպի վեր սրբութեան կեանքի մէջ:

ԹՕՄՍՍ ԿԻՒԹԷՐԻ

ԱՅՆ ԲԱՆԵՐԸ՝ ՈՐՈՆՔ ՏՈՒՐՔԻ ԵՆԹԱԿԱՅ ԶԵՆ

Հարկահաւաք պաշտօնեայ մը օր մը կ'երթայ աղքատ քարոզիչի մը տունը իր ունեցածը գնահատելու որպէսզի ըստ այնմ տուրք որոշէ:

— Ես շատ հարուստ մարդ մըն եմ, կ'ըսէ քարոզիչը:

Կտաւարակոն պաշտօնեան անմիջապէս կ'սկսի մատախին ծայրը սուրցնել: Ըսէ՛ք նայիմ ուրիմն ի՞նչեր ունիս:

— Ես ունիմ, կ'ըսէ քարոզիչը, Փրկիչ մը որ յաւիտեանակոն կ'ստնք մը շահեցաւ ինձի, և երկնային քաղաքին մէջ ալ բնակարան մը:

— Ուրիշ ի՞նչ ունիս:

— Ես ունիմ քաջ և քրիստոնեայ կիւն մը, և Սօղոմոն կ'ըսէ. «Ո՞վ կըրնայ գանել ասաքինի կիւն մը, անիկա շատ գոհարներէն աւելի է»:

— Ուրիշ ի՞նչ ունիս:

— Քաջառօղջ և հնազանդ զաւակներ:

— Ուրիշ ի՞նչ ունիս:

— Զուարթ սիրտ մը որ ուժ կուտայ ինձի այս կ'ստնքը ուրախութեամբ անցնելու:

— Ուրիշ ի՞նչ ունիս:

— Ամէնը այս է, կը պատասխանէ քարոզիչը:

— Հարկահաւաք պաշտօնեան կը գոցէ իր հաշուետեսարը և գլխարկը առնելով ձեռքը կ'ըսէ. «Արդարեւ հարուստ մարդ մըն էք, պարտն քարոզիչ, սակայն այս քու ունեցածներդ տուրքի ենթակայ չեն»:

«Կապիլլոյ Կիլերո»

ՍՐ. ԳԻՐՔԸ ԻՐՐ ԳԱՆՁ



Սր. Գիրքը գիրքերուն Գիրքն է, և առանց բացառութեան ամենահետաքրքրական Գիրքն է աշխարհի երբ ան ուղիղ հասկացւի այդ համեմատութեամբ ուլ անոր հրապարակը կը զօրանայ: Այլապէս անիկա շատերուն համար տաղանդալի և չոր պիտի երեւնայ: Ուղիղ հասկնալու համար լեզուագէտ կամ փիլիսոփայ ըլլալ չպահանջուիր, Ան Աստուծոյ խօսքն է և պէտք է Աստուծոյ Հոգիին առաջնորդութեամբ կարգալ թափանցելու համար իմաստին, «վասնզի Հոգին ամէն բան կը քննէ Աստուծոյ խորունկ բաներն ուլ» (Ա. Կոր. 2. 10):

Սր. Գիրքը Տէրջը մտքին և կամքին յայտնութիւնն է մահկանացուէտկներուն, և ըստ Պողոս առաքեալի ան, «օգտակար է սորվեցնելու, յանդիմանելու, շտկելու և արդարութեան խրատելու համար» (Բ Տիմ. 3. 16): Ան կը յայտնէ մուրտ մարդկային ցեղին թէ ո՛ւր պէտք է դանէ և ի՞նչ պէս պէտք է գտնէ իր փրկութիւնն ու խաղաղութիւնը: Ան կը պարտաւորէ խառնուսիչ խոստումներ որոնք կը վերաբերին թէ՛ այս աշխարհի և թէ՛ ապառնի կեանքին համար: Անիկա կը յայտնէ թէ Աստուծոյ կ'ոտէ մեղքը, կը դատապարտէ զայն: Մեղաւորը կ'զգուշացնէ մեղաւորի կեանքէն որուն վարձքը մահ է, ցոյց կուտայ Փրկիչը և մարդոց հանգէպ Աստուծոյ անհատնում սէրը:

Սր. Գիրքը հաւատացեալին քորտէսն է, պանդուխտին ցուպը, նաւավարին ուղեցոյցը, քրիստոնեային անցագիրը, զինուորին սուրբ Սատանային դէմ կռուելու համար պէտք

ունինք լուսոյ զէնքերուն, «որպէսզի կարող ըլլանք Սատանային հնարքներուն դէմ դնել» (Եփես. 6. 10):


Ան ամենէն շատ սպասում ունեցող գիրքն է, այսօր անիկա հազարէ աւելի տարբեր լեզուներու թարգմանուած է, և իր լոյսը կը տարածէ խաւարակու երկիրներու մէջ բնակող և մահուան սառուերին մէջ նստող մոլորութիւններու, որոնք կը վայելին փրկութեան ուրախութիւնը, որ որպէս գետ կը յորդի այն սրտերուն մէջէն որոնք կը կարգան և կը պահեն զայն:

Անիկա ի՞նչ յեղաշրջումներ կատարած է մարդոց կեանքին վրայ: Գողը ըրած է պարկեշտ, ստախոսը՝ ճշմարտախոս, անբարոյ և պիղծ մէկը՝ արդար և սուրբ: Շատ մը հրէշներ հրեշտակներու փոխուած են, մեռածները կենդանացուցած, նոր արարածներու փոխած է:

Աշխարհի մէջ մեծ անունը կրող մարդիկ միշտ անոր զիմած են և անկէ օգտուած են: Կ'ըսուի թէ Կլաւտիսի առօրեայ դասագիրքն էր ան, Աբրահամ Լինքոլնի տաղանդը, Կարֆիլային միաթաւիչը, և Մաքինզիին հանապազօրեայ խորհրդականը, վարդան Մամիկոնեան մանկութենէն վարժուած էր Սր. Գիրքէն համարներ սորվելու: Ասոնք և ուրիշներ Աւետարանին ճշմարտութիւններէն կը անանէին և կը ներշնչուէին:

Այսպիսի գանձի մը համար Աստուծոյ փառք ըլլայ:

Վեր. Օ. Պ. ԹԱՊԱԳԵԱՆ



ԵՐԱԽՏԻՔ



Առաքինութեանց շարքին, անգին գոհարներէն մին է երախագիտութիւնը: Մարդկային բարձրագոյն էակը, ստորադաս արարածներէն զանազանող՝ մեծագոյն յատկութիւնն էրէն մին է ան: Անիկա՝ նման օգտաշատ գետի մը, իր մէջ կ'ընդունի փոքր վտակներ, սակայն իր ճամբու ընթացքին, տեղի կուտայ գետակներու, որոնք կը բաժնուին իրմէ:

Երախսիք ինքնաբերական ազդիւրակի մը կը նմանի, որուն ջուրը՝ երկու ճիւղերու կը բաժնուի. մէկը՝ զէպի Ասուած, իսկ միւսը՝ զէպի մարդկութիւն: Երկրորդ ճիւղը՝ առաջինէն ծնունդ կ'առնէ և վերջապէս առաջինին մէջ կը լւծուի. հետեւորար նախ երկրորդը նկատի առնելով, զայն կը միացնենք առաջինին:

Երախագիտութիւն առ մարդիկ. — Անկար ու անօգնական երախտն՝ աշխարհ կուգայ զինք սիրող ու խնամող մօր մը գիրկը: Իր ծնողքը զինքը կը խնամեն մեծ գուրգուրանքով: Ան իրեն մանուկ, պատանի, կը յաճախէ դպրոց՝ ուր կը գտնէ ազնիւ ու բարի ուսուցիչներ, որոնք՝ մեծ ջանքով իր մէջ, գեղեցիկին ու բարին սէրը կ'արժարեն ու լաւ նկարագրի մը կազմութեան մեծապէս կը նպաստեն: Գործաւորը՝ առատաձեռն գործատէրերու շնորհիւ կը վայելէ ամէն հանգստութիւն:

Կեանքի մէջ, ամէն մարդ, միշտ իրեն յարմար ընկեր ու բարեկամ կը

փնտէ ու կը գտնէ: Անկեղծ բարեկամները կ'երջանկացնեն մեզ, մեր վշտերը ու հոգերը թեթեւցնելով: Հիւանդը, ճամբորդը կը գտնէ ընկեր ծանօթ կամ անծանօթ, բարեկամներ ու օժանդակներ երեւան կ'ելլեն ճիշդ յարմար ատենին:

Երախագիտութիւն առ Ասուած. — Ամէն բարեաց ու չնորհաց ազդիւրը մեր Արարիչը՝ Ինքն է: Մեզի եկող բոլոր օգնութիւններ ու շնորհներ՝ զանազան միջոցներով, բոլորն ալ իրմէ կը բխին: Ամէնագէտ ու գործվագութ մեր Երկնաւոր Հայրը՝ մեր կարօտութեանց տեղեակ, ճիշդ ժամանակին կը զրկէ, բաւարար օժանդակութիւնը: Ո՞վ դրամ է մօր սրտին մէջ աննուաճ սէրը, զաւկին հանդէպ: Ո՞վ է որ ճիշդ առնին մեր պիտոյքները կը ճամբէ երբեմն անծանօթ միջոցներով իսկ: Այո՛, մեր Արարիչը՝ իր ձեռքին մէջ ունենալով տիեզերքի կառավարութիւնը, Ինք կը հրամայէ ու պարգեւներ կ'իջնեն մեր վրայ: Ան է որ կը յարուցանէ բարեկամներ, ընկերներ, օգնականներ, կարեկիցներ նաեւ ուրախակիցներ սա կեանքի տնայադասային ճամբորդութեան միջոցին, մեզ կաղզուրելու, քաջալերելու և ուրախացնելու համար:

Բարեսէր տնտեսներ ու անգութ բռնակալներ Անոր ձեռքին մէջ կը ծառայեն իր նպատակին իրազորման: Աստուծոյ կերպերը զանազան են ու զարմանալի: Երախագիտութեան կ'զգանք մարդոց հանդէպ և ա՛լ աւելի Ասուծոյ քանդի Ինքն է ակը՝ ամէն բարեացի փառք Տէրոջ:

Երուսաղիմ

Բ. Գ. Ե.

ՏԱՐՏԱՐՈՍԻ ԴՈՆԵՆ

Մտքի յափշտակութեան մէջ այնպէս զգացի որ Տարտարոսի գրան մօտեցած եմ ուսկից կու գային, «Ահ... աւա՜ղ... ափսո՞ս...» աղաղակներ: Առջեւ վիթխարի և փակ դուռ մը կար, մեղմօրէն հրեցի ու նեղ քացուածքէն նշմարեցի անհամար մարդկային էակներ, որոնց բերնէն կը բարձրանային սոյն սրտածմլիկ հաւաքանքներ, և անոնք արձագանգ կու տային գեհնի տղամուղջային միւս մասերուն մէջ:

Առ յաւէտ դատապարտեալ այս ամբոխին տղիխարչ աղաղակները տներեւակայիօրէն յուզիչ էին: Ահաւոր էր լայնատարած կրակներու մէջ սնյուտօրէն թափառող մարդոց այս վիճակը:

Ոմանք դեռ փրկութեան յոյս ունենալով՝ անոր համար կ'աղաղակէին: Ուրիշներ կ'անիծէին իրենց Արարիչն ու իրենց ծնողքը: Ոմանք ալ իրենց չարչարանքին վերջ մը զնեղու համար այդ ահաւոր բանէն ելք մը կը փնտռէին:

Ուրիշ տհալի տեսարանի մը եւս հանդիպեցայ, ո՛ւր ոմանք կատաղի կռիւ կը մղէին իրարու հետ: Անաստուածներու չուրջ հաւաքուած էին անթիւ հոգիներու բազմութիւն մը, որոնք անհաւատութեան առաջնորդուած էին սոյն անաստուածներու կողմէ անոնց խաբեպատիր գրքոյկներով և բանախօսութիւններով: Այս խտրուած ամբոխը յարձակում գործած էր անաստուածներուն վրայ իրենց վրէժը լսեցնելու: Ո՛հ, ի՞նչ սոսկալի ու վայրագ բուռնութիւններ կը տեղային անոնց գլխուն, ո՛հ, ինչպէ՞ս կը ջանային բղբտել սոյն անաստուած քո-

րողիչները: Արդարեւ աներեւակայելի էր անոնց վիճակը: Տեսարանը կը նմանէր վանդակի մը մէջ հաւաքուած վայրի գազաններուն որոնք կատաղօրէն զիրար կը յօշոտէին:

Սրտայոյզ էր նաեւ աւելի հեռուն գտնուող ամբոխին ողբալի ճիչերը: ՉԱստուած մերժողներ էին անոնք: Այս խուճիրն բոլոր անհատները խելագարած էին, ու կրակի բոցերու մէջ իրենց կուրծքը ծեծելով կ'ըսէին. «Ափսոս որ չգիտցանք, չսնայինք Սբ. Հոգւոյն ձայնին, մերժեցինք մեզի ներկայացած պատեհութիւնները:

Այդ ամբոխին մէջէն յանկարծ նշմարեցի երիտասարդ մը: Անիկա զուռակն էր հաւատացեալ ծնողքի մը: Մանուկ հասակէն լսած էր Աստուծոյ խօսքը, բայց մերժած էր հնազանդիլ Աստուծոյ ձայնին: Տէրը յոճախ այցեւում էր իրեն, սոկայն այցելութեան օրերը անսեսած էր: Միշտ կը զարնէր իր սրտին դուռը, բայց ան չէր բանար: Սիրտը կարծրացուցած էր, ամուր փակած էր իր առջեւ, միւս կողմէ Սաղայէլը բազմեցուցած էր իր սրտին գահուն վրայ: Այս չարը իր սրտին մէջ կիրքերու գերի զարձուցած էր զինքը, շղթայեր էր զինքը մեղքի բանտին մէջ, բայց աւա՜ղ ինքը չէր տեսնիր և չէր զգար:

Տեսայ զինքը ողբացող խուճիրն մէջ և յիշեցի իր մահուան պարագան որուն տկոնատես եղած էի: Մահամերձ էր ան, բոլոր ընտանիքը մեծ տապալակի մը մէջ: Յանկարծ աչքերը բացաւ ու սրտածմլիկ ձայնով մը. «Ո՛հ բացէ՛ք ինձ այդ դուռը» աղաղակեց, ու կրկին գոցեց: Պահ մը վերջը իր մարմինը կը շարժէր, այս անգամ իր բոլոր ուժը հաւաքելով ձեռքերը վեր բարձրացուցած անգամ մըն ալ ուժգին, «ո՛հ բացէ՛ք ինձ այդ դուռը»



ՄԵՐ ՀԱՅ ԵՐԿՄԵՆ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՆ



ԵՐԲԵՔ ՍՈՒՏ ՄԻ՝ ԽՕՍԻՐ

Անգամ մը անգլիականն նաև մը
 Լիվրբուլի քարափէն բաժնուեցին չորս
 օր ետքը կա՛կ կարասիներու մէջ պահ-
 ււնաւ աղայ մը գտնուեցաւ: Պատա-
 նի մը որ ոչ ճամբորդներուն և ոչ ալ
 նաւաստիներուն մէջ ազգական մը
 չունէր, չկար մէկը որ իրեն հոգ առ-
 նէր: Ո՞վ էր այս աղան, ո՞ւսկից ե-
 կած էր և ո՞ւր կ'երթար: Հին հա-
 գուստ մը ունէր որուն վրան տեղ-տեղ
 կը տեսնուէր կարկտան: Գեղադէմ և
 անմեղ երեւոյթով ինը տարեկան
 աղայ մըն էր:

աղաղակեց, սակայն դրան վրայ գըր-
 ուած «չառ ուշ» խօսքը տեսաւ ու
 հոգին սուսնդեց: Երբ մը մաքի յա-
 փշտակութեանս վերջ տուաւ: Լսեցի
 մէկուն երգելը.—

«Լսե՛ աշտօր անյապաղ հեզ կանչող
 ձայնը Փրկչիդ

Վաղը կրնայ շատ ուշ ըլլայ քու
 դարձիդ,

Անապատի՛ քանի ուշ չէ, հեզ
 կ'ըստես կարողիւ,

Նեոուէ անյախ քաղկացր լեռ,
 կանչող Փրկչիւ

Ո՛հ, այն ասեմ պիտի գիտնաս սերն
 քանկազին»:

Կը տարուի նաւապետին, նաւա-
 տապետը խտորէն կը հարցնէ իրեն
 թէ ի՞նչպէս գողտաղողի մտած էր
 նաւ: «Խորթ հայրս մացուց զիս հոս,
 կը պատասխանէ աղան, ու կ'աւելցնէ
 ի վիճակի չէր զիս պահել, ոչ ալ վճա-
 րովի Հալիֆաքս զրկել զիս մօրա-
 քովս, ուր կը փախաքիմ երթալ»:

Նաւապետը չէր հաւատար ըսուե-
 ծին: Ան շատ անգամ այսպէս խաբ-
 ուած էր, որովհետեւ յաճախ կը պա-
 տահէր նման բաներ ստանց տոմսակի
 գողտաղողի ճամբորդողներուն երե-
 սէն, որ իրեն մեծ աղտուկ պատճա-
 րած, և մեծ ծախսերու ենթարկած
 էին զինքը:

Նաւապետը խորհելով որ այս
 աղուն փախուստի գործին մէջ նա-
 տաստիներէն մէկուն մտած կայ, շատ
 կոշտօրէն կը վարուի աղուն հետը:
 Ամէն օր կը հարցապնդէր զինքը հա-
 կնալու համար թէ ի՞նչպէս մտած էր
 նաւ, և ամէն օր միեւնոյն պատաս-
 խանը կ'ստանար:

Ի վերջոյ ստատիկ դայրացած ի-
 մաց կու տայ աղուն թէ, եթէ մինչեւ
 տասը վայրկեան չխտտովանի ճշմար-
 տութիւնը նաւուն կայմէն պիտի կա-
 խէր զինքը:

Ասիկա զարհուրելի էր: Ներկա-
 ներուն մէջ ո՛չ մէկը կար զինքը
 պաշտպանող: Պաշտօնիս մը կեցած
 էր ժամացոյցը ձեռին՝ կը համրէր

վայրկեանները, որ թիք-թագ, թիք-թագ արագ-արագ կը գործէր: Նուաւատները մէկ անկիւնը քաշուած հեւ ի հեւ կ'սպասէին վախճանին:

Պատանին՝ գոյնը նեւտած, արտասուելից աչքերով սակայն գլուխը բարձր բռնած կը կոյնէր անվախ:

Ութը վայրկեան անցած էր արդէն:

Նուապետը կրկին խօսք ուղղելով տղուն ըստւ. «Այժմ երկու վայրկեան ունիս միայն, խօսէ ճշմարտութիւնը որպէսզի տարիս»:

Պատանին աչքերը վերցնելով նայեցաւ նուապետին խոժոռ դէմքին ու հարցուց. «կրնամ տղոթել»:

Նուապետը շարժեց գլուխը բայց չխօսեցաւ բան մը:

Տղան ծռակի եկաւ տեղւոյն վրայ, ձեռքերը իրարու միացուց և աչքերը դէպի երկինք զարձնելով կրկնեց Տէրունական Աղօթքը և խնդրեց Յիսուսէն որ զինքը ընդունի երկինք:


Ան կրնար մեռնիլ, սակայն չէր կրնար ստել:

Նուապետը վեր ցտակեց նստած տեղէն, մօտեցաւ տղուն, գրկեց զայն և համբուրեց՝ ըսելով. «Հիմա կը նուաւատամ ամէն խօսքիդ»:

Այս անվախ և ճշմարտութեան համար քաջ այս պատանին այսպէս մահը զիմաւորելը վսեմ տեսարան մըն էր որուն նմանը երբեք չէր պատահած այդ նաւուն մէջ: Աստուած օրհնէ այսպիսի պատանիները: Տէրը կը կոյնի տոնախմբներուն քովը, որոնք իրեն համար հաւատարիմ կը մնան: Ճամբորդութեան մնացած մասին մէջ ան ունեցաւ չատ բարեկամներ: Առաջ մէկը չէր ուզեր տէր ելլել իրեն, այժմ ամէն ոք կ'ուզէր բարիք ընել:

Կը մաղթենք որ այս պատմութեան մէջ ի յայտ բերուած վսեմ արարքը կարգացող ո՛ր եւ է մէկը՝ ի գին ամէն բանի ճշմարիտը խօսելու և ընելու համար պիտի զօրանայ:

Պէյրուք Թարգ. Ս. Կ. ՔԷՇԻՇԵԱՆ



ՅՈՐԴՈՐԱԿ ՆՈՐԱՀԱՍՆԵՐՈՒՆ

Հեռո՛ւ շրթունեից օղի կամ գինի,
Եղի՛ր միշտ ժուժկա, միշտ ստափիւնի,
Ժիր երիտասարդ, պստանի զրուար,
Ճակիդ թող շուշան կապի, դիմֆիդ՝ վարդ:

Կեանֆիդ Գարունը:

Կարչնեղ քաղուկներդ՝ շարժի՛ն օրն ի բուն
Ասոյ հասկերով արեւոյ եւ ծրփուն,
Մթնոյտս մը շաֆ շնչես սիրալիտ
Ու կեանֆ մ'անուշիկ վայելես պայծառ,

Կեանֆիդ Ամառը:

Ուռերն այգիին ծանրութեամբ կրֆին,
Ճոխ քարիֆներու՝ զըքած երկրնֆին,
Ու տունդ օրհնուած, բո՛յն մը սիրազեղ,
Հնչե՛ւ միշտ զրուար ձայներով անմեղ,

Կեանֆիդ Աշունը:

Անխոնջ ցանկերդ՝ լուրջ, հաւքերստա
Վայելես քարիք բերկրապստ,
Կազմած անընթան ճիպար ընտանիֆ,
Մինչ սանի մեղմիկ, խաղաղ, եղանիկ

Կեանֆիդ Զրնկը . . . :

Նիւ Եոթ

Ս. Կ. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ



ՀԱՐՑՈՒՄ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆ

Հարց.— Սասանան կրնա՞յ գործել այն հրաշքները զորս գործեց Յիսուս Իրեն հաւաստողներուն վրայ: Եթէ այո՛, Յիսուս ինչո՞ւ պահանջեց որ զեք Իր ըրած հրաշքներուն համար Իրեն հաւասան, քանի որ Սասանան միեւնոյն քաները կրնայ ընել:

Պատ.— Զեք այս հարցունը հիմնուած է Յովն. 10. 38 ին վրայ: Հոն մեր Տէրը հրաշքի խօսք չըներ, այլ կ'ըսէ. «Թէեւ ինձի չեմ հաւաստար զոնէ գործերուն հաւաստեց»: Իսկ ակնարկեալ գործերուն տեսակը մեզի կը յայտնուի 32րդ համարին մէջ ուր «չաւ քարի գործեր» ըսուած է: Անտարակոյս, այդ «չաւ քարի գործեր» կը պարփակեն Իր կատարած հրաշքներն ալ, սակայն, միշտ մարդոց գիտագոյն օգտին ծառայող գործեր էին անոնք: Արդ, Սասանային «քարի գործ» մը ակնկալել կոկորդիլոսէն կարեկցական արցունք ակնկալելու կը նմանի:

Իսկով Սասանային կարողութեան՝ հրաշքներ կատարելու, 2 Թես. 2. 9 ին մէջ երբ առաջեալը կը խօսի «զայիմ ածօրհն»-ի մասին կ'ըսէ թէ՛ ան պիտի գայ «Սասանային ազդեցութիւնովն ու բոլոր գործիչներով եւ նշաններով ու սոսկ հրաշքներով»: Իսկ տեսնողը Յայտ. 16. 14 ին մէջ կը խօսի պիղծողին մասին «որ նշաններ կ'ընեն»:

Ուրիշ համարներէն ալ կարելի է եզրակացնել թէ՛ Սասանան ունի կարողութիւն, նշաններ եւ հրաշքներ կատարելու, թեպէտ անոնք ըրան կեղծ եւ սոսկ պարզապէս մտքով կոյրերը խաբելու համար: Ինչ ալ ըլլայ Սասանային գործիչներ, անկիս սահմանափակ է որպէս արարած, իսկ Յիսուսի գործիչներ անսահման է որպէս Արարիչ: Երկուսին միջեւ նմանութեան եզր գոյութիւն չու-

նի: Յիսուս կրնար անէն տեսակ հրաշքներ կատարել, սակայն մեզի ծանօթ չէ թէ Սասանան ինչ հրաշքներ կրնայ գործել: Սալափը որոշ է, ան կրնայ ցաւ եւ դժբախտութիւն բերել մարդոց վրայ, եւ հաւանական է՝ որ իբր բերող՝ կարող է գտնուի վերցնելու ալ: Յիսուսի կատարած հրաշքներուն բնոյթը կրնար համոզել ո՛ր եւ է մեկը — եթէ նախապաշարուած չէ այդ մեկը — որ անոնք կու գային ուղղակի Աստուծու եւ անկիս կոյրին ծայնակցելով պիտի ըսէր. «Եթէ Աստուծու չըլլար քան մըն ալ չէր կրնար ընել»:

Հարց.— Ծնունդ. 3. 15 ին մէջ ի՞նչ կը նշանակեն, «Բունկին եւ կնոջը մեջեղ. եւ քու սերունդիդ եւ անոր սերունդին մեջեղ բշտակութիւն պիտի դրնեն, ան քու գրուած պիտի ջախջախէ եւ դուն անոր զարշապարը պիտի խայքես» խօսքեր:

Պատ.— Այստեղ շեղուն փոխաբերական է: Ընդհանրապէս ընդունուածը աւ՛ է՝ թէ կնկան սերունդը հոս Բրիստոլը կը խորհրդանշէ, իսկ օձը՝ Սասանան: Բրիստոն եկաւ Սասանային գործերը փակելու եւ մարդիկը ազատելու անոր ճիւղներէն: Իր այս գործին ճակատն վրայ դիմ յանդիման եկաւ Սասանային հետ: Այս սահման մենամարտին մէջ Սասանային հետ՝ մեր Տէրը ստացաւ վիրէր: Սնոր համար Եսայի կ'ըսէ. «Անկիս մեր մեղքերուն համար վիրաւորուեցաւ»: Սակիս Սնոր զարշապարին խայքութիւն եր որ պատճառեց Իրեն զիջիական մահ, իսկ բշտակին ստացաւ գրոխէն (կենսական տեղը) մահացու հարուած որ իրեն պատճառեց ջախջախիչ եւ վերջնական պարտութիւն մը:

Ծ Ի Ա Ծ Ա Ն Ը

«Իմ աղեղս ամպին մէջ պիտի դնեմ»:
(Ծննդ. 9. 15)

Այս խօսքերը Աստուծոյ կողմէ ուղ-
ղուած էին Նոյին իբր հաւաստիք իր
ըրած Յաւեեղակաւ ուխտին, ըստ որում
աղեղը պիտի կենար իբր խորհրդանշանը
Աստուծոյ ողորմութեան զայիս սերունդ-
ներուն համար: Անկի ի վեր այդ հրաշա-
լի օղերեւոյթը կը տեսնուի երկրակաւա-
րին վրայ ամպին մէջ: Աստուած զայն
դրած է ամպին մէջ, Ան ամպը ջլերցներ
սակայն կը դնէ սնոր մէջ Իր աղեղը:
Եւ այդ աղեղը մեզի կը խօսի Ապստո-
լոսութեան, Օրհնութեան եւ Խոստումին
վրայ: Ասկիւ նշանակալից է. որքան
թանձր եւ մուսկ է ամպը նոյնքան փայ-
լուն եւ յստակ է ծիածանը: Փա՛նք Անոր:

Սոյն բնութեանը կրեանք կիրարկել
մեզի համար հոգեւոր մարզի մէջ: Բա-
նի քանի անգամներ մեր ֆրիստենակաւ
փորձառութեան մէջ զիտակից եղած ենք
անպարտուն մեր երկինքին մէջ: Սակայն
յայտնուած է նաեւ Աստուծոյ աղեղը Իր
խոստումներովը որոնք նշանաւոր են: Ա-
նոնք (Աստուծոյ խոստումները) Իր
մէջ Այո, եւ Ամեն են:

Առդ, ծիածանին գոյներուն մէկ
վերջածունը ընենք: Այդ գոյները եօրը
հաւ են, ամբողջական թիւ. որոնք կը
խօսին Աստուծային կատարելութեան
եւ մեր փրկութեան մասին: Ծիրանի
գօտին գոյներն են. — մանիշակագոյն,
կապուտակ. կապոյտ, կանաչ, դեղին,
նարնգագոյն եւ կարմիր որոնցմէ իւրա-
քանիշը ունի իր իմաստը:

ՄԱՆ.ԻՇԱՆԱԳՈՅՆ... . . . Ժիրանե-
գոյնի մէկ տարբեր երանգն է: Անկիւ ա-
րաքական գոյն է որ մեզի կը յիշեցնէ այն
անդերձը զոր հագցուցին մեր Տիրոջ:

ԿԱՊՈՒՏԱՆ ԵՒ ԿԱՊՈՑ... . . . մի-
եւնոյն գոյնին տարբեր երանգները կը
կազմեն: Կապոյտը երկնային գոյն է եւ
կը խորհրդանշէ երկնային կենցաղ մը:

ԿԱՆԱՆԶ... . . . Բնութեան գոյնն է
անկիւ, եւ կը խորհրդանշէ հաճելիու-
թիւն, առատութիւն, շնորհալիութիւն,
հանգստաւէ վիճակ, «Զիս խոստաւէ ա-
րօտներու մէջ կը պսակեցնէ»:

ԴԵՂԻՆ ԵՒ ԿԱՐՆԶԱՊՈՑ... . . .
նոյնպէս մէկ գոյնին տարբեր երանգներն
են, կը նշանակէ փառաւորութիւն, պո-
ղապետութիւն, նոյնպէս կը խորհրդանշէ
փաստաւորում:

ԿԱՐՄԻՐ... . . . արեան գոյնն է: Ան
մեզի կը խօսի մեղքի մասին: «Եթէ ձեր
մեղքերը կրկնակի կարմիրի պէս են
ձիւնի պէս պիտի ձերմկնան, եւ եթէ որ-
դան կարմիրի նման են արտի պէս ձեր-
մակ պիտի ըլլան»:

Լոյսը կը մարմնացնէ բոլոր գոյնե-
րը, եւ երբ տարաւայրուի ի յայտ կը
բերէ ծիածանի զանազան գոյները: Յի-
սուս որ նշանաւոր Լոյսն է կանչած է
մեզ որպէսզի մենք իւրաքանչիւրը ցոյց
սալ իր գոյնը: Այսպէս ֆրիստենակաւ
կեանքի մէջ իւրաքանչիւր փրկուած հո-
գի կրնայ գոհացուցիչ կերպով յայտնել
իր գոյնը եթէ Տիրոջը համար փայլի: Ե-
թէ մեկը աշխատի սալ տարբեր գոյն մը
իրեն համար որոշուած են, այն ասեմ գե-
ղեցկութիւնն ու ներդաշնակութիւնը կը
խանգարուի եւ Աստուած չի փառաւոր-
ուիր: Եւսդիպէն եւ Սիւնդիֆեն կը
խնդրուի որ միեւնոյն խորհուրդը ունե-
նան Տիրոջմով: Դարձեալ ըստի մէջ գոյ-
ները հաւասար համեմատութիւն չունին:
Իմ պզտիկ մանիշակագոյն ճաճանջս, քո
աւելի զօրաւոր կապոյտդ ասեմը կը գոր-
ծակցին՝ Տէրը հաճեցնելու:

Ժողովի խորանին վարագոյրին մէ,

խանի մը գոյներ — կասութեան, ծիրանե-
գոյն, կրկնակի կարմիր — պիտի գոր-
ծածուէին: Այսպէս Տէրը կը պահանջե-
իր ժողովուրդէն որ տարբեր գոյներ
խառնուին եւ շօնորոշուին իրարու հետ
ներդաշնակութեան համար:

Երբ մենք ապրինք եւ շարժինք Տե-
րոջը կասարեայ կամփին հասկնաւս մենք
պիտի ստանանք գոյներ որուն մեջեւ
աշխարհ պիտի տեսնեն Ծիածանը: Այս

բանը պիտի խօսի Մատթոյ ողորմու-
թեան եւ հաւատարմութեան մասին մեզ
փրկելուն մեջ, ուր պիտի երեւնայ զանա-
զանութեան հետ աւսումնասիրելու ներդաշնա-
կութիւն: «Ասով ասեմք պիտի զիտեան
թե իմ աշակերտներս եւ, եթէ իրարու
վրայ սեր ունենանք»: Յիսուս այս պաշ-
տօնը յանձնած է եկեղեցւոյն, մենք պիտի
է ցոյց տանք աւսումնասիրելու գոյները:

Թարգմանութիւն

ՍՕՆ ԿԻՒՆՏԷ ԱՆԸ ԳԸՅԱՄ ԷԹՏԻՐԷՅԻՄ

«Օղիւ կտօրիւ պ Անա իման էսէն հէր պիր քիմսէ էպէտի
հայաթա մալիք օլա, պէն քախի Անը սօն կիւնէ գըյամ էթ-
սիրէյիմ» Յովհ. 6. 40:

Անաիւ պ, փէք աճաիւ պ, նոսրը օ-
լուր տա էպէտի վէ գըւտտուս օլան ա-
զիմ Ալլահ պիզիմ կիպի տիւնեանըն
պէտէյի հիւքմիւնտէ օլան զաիֆ պէ-
շէրիյէթէ էնէմիյէթ վէրիւ պ մէշղու
օլուրն. Սահիպի մէզմուր պուշլարը
միւթէլտա էտէր իքէն, միւթէնայիւր
գալլարա՝ տէտի. «Ինքան ճե՝ սիր քի
անը զիքը վէ զիյարէք եսէսին» Մէզ.
8. 4. Իպթիտաւն պէրու Ալլահըն
պէշէրիյէթ հազգընտա օլան ինայէթ
վէ թէրթիպլէրի աճաիւ պ տիր. Ալլահ
ալըր քի տաէմի տիւնեանըն վէ կիւ-
նահըն էսարէթիւնտէն ազատ էտէր, վէ
Յիսուս Քրիստոսըն Իսմի իչիւն քէն-
տինէ թէսլիմ օլուրնտէն հէր պիր ճանը
չօլ պէօյիւք տիւնիւնին փէնչէսինտէն
վէ չու տիւնեանըն թէճրիւպէ վէ է-
լէմլէրիւնտէն հըֆզ իտէր. Մէզքիւր
(Յովհ. 6. 38-40) այէթլէրտէ իքի տէ-
ֆա շու իպարէ զիքը օլուրնազտա
ալըր. Անը սօն կիւնտէ ինա (իգամէ)
էտէյիմ» իմտի պիզ իմանլէ թէպրիւր

օլուրնտէն քիմսէլէր, տֆլըղա, սէլամէ-
թէ, խէլաւ վէ էպէտի հայաթա մալիք
օլան քիմսէլէր, էպէտէն մէզարտա
գալմայաճազըզ, նէ պիզտէն էվլէլ
Բապպտա վէֆաթ էտէն սէվկիւլիլէ-
րիմիզ. պիզ իւմիւտլէրի օլմայան աա-
իլլէր կիպի մահըն տէյիլ իզ. պի-
զիմ սօն լաւաթ վէ մէսքէնիմիզ մէ-
զար տէյիլ տիր:

Ուլլաքիարըմըզ մէզարտա գալ-
մայըզ՝ էմվաթտան գըյամ էթաիլի
կիպի. քէզալիք պիզ տալի, Բապպ
սէմատան իքինճի տէֆա գըւհուր էթ-
աիլինտէ, միւնթէլապլարընը սուրըն
ազիմ սէտաւըլլէ գըյամ էթտիրէճէք
վէ հալտա պիրլէշիպ մուգտտէսլէ-
րին ազիմ ճիւմհուրընտա մուազզէզ
վէ հայրէթպալիչ օլմազ ալըր. Պիզիմ
էտնա ճէսէտիմիզի քէնտինին միւշէր-
լէֆ ճէսէտինէ թէպաիլ էտէճէք տիր:

Իպն Ուլլահըն ճէսէսինէ պէնզէր...
Նէ աճաիւ պ ինայէթ. պու էմասըզ
պիր իւմիւ պ վէ թէսլիլ տէյիլ տիր,

իլլա գաղի վէ տարաբնույթ պիր էմնի-
յէթ տիր Ազիմ Ալլահըն վէ խէլա-
քնարմըզըն էպէտի վառարընտ մէպ-
նի: «Անտ պէնդէր օլաճաղըզ, տնը հէ-
ման օլաղու կիպի կէօրէճէյիզ» վէ
«պէօյլէճէ էպէտէն Րապպիլէ պէրապէր
պուլունաճաղըզ» Ա՛հ, աճէպտ պիզիմ
իչիւն նէ՞ կիպի աճաիպաթլար իզնար
օլունաճաղ սէմատա, չիմտի պիր ճիւ-
զի պիլիւրիզ, ամմտ էպէտիյէթաէ ան-
լէրի կէօրիւպ, կէօնէնիպ մի թէհալ-
յիր գալարազ իլէլ էպէտ Գուզուլա
համտ սունաճաղըզ: Լաքին պու կիպի
էմնիյէթէ շիմտի պու զէմինտէ իքէն
նա՞սըլ մալիք օլապիլիւրիզ: Թարիզ
պիր տիր: Գողգոթատա պի թիւն
տիւնհա իչոն քէնտի գանընը տէօ-
քէն Րապպ Յիսուս Քրիստոսա օլան
հաղիգի իման իլէ. պու Զաթ սէմա-
տան կէլիպ Ալլահըն Գուզուլը հո-
լինտէ ճիւմէմիզին կիւնահընը քէն-
տի իւզէրինէ տլար, թաքի Անտ հէր
իման էտէն հէլաք օլմալըպ տնճաղ է-
պէտի հայաթտ մալիք օլա:

Րապպ Երէմիա փէյլամպէր վա-
սըթասըյէ պուլալըր քի «կիւնահալա-
րընըզը արթըզ առա խաթըրմա կէ-
թիւմէյէճէյիմ», էվիլէթ՝ անլէրի տէ-
նիզին տիպլէրինէ զարգ էտէճէք վէ
պիզիմ պէօյիւք պօրճուլուզը պաղը-
լայաճաղ տըր: Պունլարըն քիաֆֆէսի-
նի իճրա էտէն Ալլահ օլուպ՝ առէմ
Յիսուս Քրիստոսա եէնի պիր մալա-
լուզ օլարազ գալպինտէ սէմալի պիր
իւմիւա փարլար: պիլիւր քի չու գըս-
աա էօմրիւ խիթամ պուլտըզընտա
Ալլահըն հուզուրընտա իլէլ էպէտ ետ-
չայաճաղ, նէ մութլու հալ վէ միւս-
թապպէլ, «վէ Սէմատան պիր պէօյիւք
սէտա իչիթաթիմ քի՝ իչթէ Ալլահըն
մէսքէնի ինսան իլէ օլուպ՝ Օ անլէր
իլէ սաքին օլաճաղ տըր, վէ Ալլահ
անլէրին կէօղլէրինտէն ճիւմէ կէօզ
եաշլարընը սիլէճէք, վէ էօլիմ արթըզ

օլմայաճաղ, վէ արթըզ հիւզն վէ
ֆէրհատ վէ աղըր պուլունաճաղ
տըր» Վահի 21.3-4: Օ զէման Րապպ
Յիսուսը, մէլիյիմիզ հալինտէ, ճիւմէ
ազամէթ վէ ճէլալիլէ, թախթընտա
օթուլումազտա՝ հէմատի Փէտէրիմիզ
Ալլահը կէօրիւպ՝ Անըն իսմի տաթի
պլընլարմըզտա եաղըլումազ տըր:

Աճաիպ, փէք աճաիպ, խաթա,
կիւնահ վէ խստնտա էօլմիւշ պէշէ-
րիլէթ Րապպ Յիսուսըն զանընտա
եըյգանըպ սաթուն ալընարազ Ալլահ
տնը նէ ճէլիլ վէ մութլու պիր մէվ-
զիլէ թէրֆի էտիյօր: «Փաքաթ ետ-
զըլտըզը իւզրէ՝ կէօզ կէօրմէտիյի վէ
գուլազ իչիթմէտիյի վէ տաէմին ֆիք-
րինէ կէլմէտիյի, ետնի Ալլահըն քէն-
տինի սէվէնլէրէ հաղըրլաւըզ շէյ-
լէր» 1 Կորն. 2. 9:

«Անը սոն կիւնտէ գըյամ էթաթի-
լէճէյիմ»:

Սէն պու իւմիտ վէ էմնիյէթէ
մալիք մի սին:

Միւթ. Կ. Յ. ԹՈՒՄՈՒՆԵԱՆ

ՎԱԼԻՏԷ ՄՈՒՀԱՊՊԵԹԻ

Տէնիլիյօր քի պիր մէլէք կիւզէլ
պիր կիւնտէ կէշթ ի կիւզար էթմէք
իչիւն չըգար վէ եօլունըն իւզէրինտէ
պիզիմ տիւնհայա թէսատիւֆ էտէր:
Շէհր վէ թարլարար արաւընտան թա-
պիի մէնզարէլէրէ վէ տաէմ էլիլէ
հափըլմըշ նէսնէլէրէ սէյր էտէրէք
տօլաչըր իտի: Շէմսին զուրուպ էտէ-
ճէյի զէմանլարտա փարլազ գտնատլա-
րընը աշարազ տէր: «Պէն արթըզ
նուլար ալէմինէ տվտէթ էթմէլիյիմ,
լաքին աճէպտ չու տիւնհայա օլան
զիյարէթիմէ թեզքեար հալինտէ պիր
շէյ կէօթիւրէ՞միմ մի: Շու չիչէթլէր
նէ՞ գատար տիւլէր վէ լայաատար
տըրլար, ճիւրտտան պիր սէյմէ տէմէթ
եափըպ կէօթիւրէյիմ»: Եօլունըն իւ-

զերինսէ պիր էլին հանընտան կէչէր
իքէն գափունըն հարըղընտան կիւլ
սիմալը պիր մասուլմ միւլչոհէտէ էտէր,
օ հաթարըղը պէչիյին իչինսէն վալի-
տէսինին հիւզիւնէ պոզըպ թէպէս-
սիւմ էտիյօր իտի: «Պու մասուլմըն
թէպէսսիւմիւ շու կիւլլէր աէմէթին-
տէն տէ կիւզէլ, անըստ ալայըմ տէր»:
Օ տազիգէտէ մասուլմըն իւզէրինտէն
կէօզլէրինի գալարըրըպ մասուլմընը չօգ
տըզգէթ իլէ սէվէն վալիտէսինի կէօ-
րիւր: Մէրգուլմէ օ սըրուսա քէնտի
զիգըյմէթ հալրուսընտ թաթլը ույ-
զու թէմէննի իչիւն աուրուպ հիւզ-
լէրինտէն պուս էտիյօր իտի, վէ կէօր-
տիւ քի պու մուհապպէթ պիհուտուս
մէնպատան ճօշտն պիր փուհարա պէն-
զէր իտի: «Օ, տէտի մէլէք, իշթէ
կէօթիւրմէյի տէյէր գըյմէթլի վէ
կիւզէլ զիքրիյէթ տաշա, անը տա տ-
լայըմ»:

Շիմտի պու իւչ խազինէլէրի պէ-
րապէր ալարադ, ինճու պոպարա
տօլրու թէյրան էյլէր: Ֆազաթ ինճու
գափուլարա հազլաշաղընտա պէրա-
պէր կէթիւրաիյի խազինէլէրի պիր
կէօզտէն կէչիւրիւր, վէ թէաճճիւպլէ
կէօրիւր քի չիւէքլէր գուրումըչ վէ
անլէրին հիւսնիւ տրթըզ գալմամըչ:
Մասուլմըն միւթէպէսսիւմ սիմասը սէրթ
պիր չէհրէ ալմըչ: Օ գուրումըչ չիւ-
չէքլէրի, զոյ օլմուչ թէպէսսիւ-
միւ տթար վէ էօյլէ իչէրի կիրէր:
Ճիհուտը սէմալի թարաֆընտան իս-
թիգալլ էտիյիւր: Անլէր պատէհու
պու ուզուլն հօլճուլըգտան պէրապէր
կէթիւրաիյինի կէօրմէք իչիւն էթրա-
ֆընտ թօփրանըրլար: Վալիտէ Մու-
հապպէթինի կէօսիլէրէրէք տէր: «Իշ-
թէ սէմալա գատար օլուն հօլճըրլատա՝
հիւսն վէ բուհասընը զայպ էթմէլիպ
պազի գալան չէյ անճագ պուհու պուլ-
տըմ: Պիւթիւն տիւնհոտա էն թաթ-
չէյ վալիսէ մուհապպէթի տիր»:

Միւթ. Խ. Թ. Ս.

ՊՈՒ ԷՕՄՐ ՖԱՆԻ ՏԻՐ

«Տաիմա ետամազ իսթմեմ . . . Զիրա
կիւնլէրիմ ժանի սիր»: Յոթ 7.16:

«Հազիգաթէն հէր աւէմ էն էյի հալըն-
սա պիլէ ֆիլլիյէն ժանի սիր»: Մէգ. 39.5:

Պու՝ մը՝ սիւեանըն սեֆասը,
Պաթըլ գեվգի՝ ճան չապասը,
Պագասըգ՝ սըր են ալասը,
Պենի իզնա եսեմեսի:

Ազըպ կիթսի, միսլի քումագ,
Ազիմ սիւրաթլէ՝ կիւնլէրիմ,
Ավսէթ երմեզ, երմեմ մերագ,
Աթի՝ հօմրէ լազըմ սթգաթ:

Տեմէ՝ ֆի, պու հօմր պագի՝ սիր,
Տիւնեալի հօմր պէս ֆեաֆի սիր,
Տեվր եսիննէ իւպու էյամ,
Տերհալ կէլիր մախուֆ ենեամ:

Սենի ճեզպ եսեն շօլ շէյլէր
Սեֆիլ ճանըն՝ պիրագ էյլէր,
Սեն մէյլ վերմէ՝ շուն օլանա,
Սեւամեթի եօզ բուհուլնա,

Ինանմա պեքերի Ֆերսէ,
Ինսան սըր օ, օղրար սերսէ,
Իմանըզ սըր, գալգսա փերսէ,
Իթիմասըն գալըր ճէրսէ:

Սեն սապը էյլէ՝ միւլֆիլաթա,
Սապրլէ՝ սեւամեթին աթա,
Սա՛յ էյլէ հեմ սասագաթա,
Սազըն երմէ գասեն խաթա:

Կիւնլէրին ա՛հ, կէչէր իֆեն,
Կիւնան օլուր սանա սիֆեն,
Կե՛լ Յիսուսա՝ վագթ վար իֆեն,
Կեն՝ օլուր, իմալ եսերսեն:

Ազիլ իսեն վիզն էթ ֆենսին,
Ազրպէթին՝ էյի սիւլիւն,
Ասուն Շէյթան, բէս էթ Ֆենսին,
Ախլէ Բապասան Ինայէթին:

Պէյրուք, 15-4-940

ՍԵՂՐԱՔ Կ. ՔԵՇԵՆՍՆ

ԱԼԹՈՒՆ ՈՒՓԱՂԸ

ՏՕՍԹԱՆԷ ԹԵԼԳԻՆՍԱԹ

2. Հուզուրը Իլահի. — Քննարկի առաջ Ալլահաւան աշըրմա՝ Պիլի սէվէն-լէրէ տաւմա հազըն հաշամագ նէ՝ թաթլը աըր:

Պիլ Ալլահը կէօրէմէյիլ, լաքին Օ մէվճուա աըր, պիր փէրաէ իլէ սէն-տէն կիլլէնմիշ պիր տօսթ կիպի տիր, օ փէրաէ սէնի կէօրիւմէտէն մէն էթ-մէզ տիկէր թարաֆտա հէր հանկը պիր զէման Քէնտինի սանա պէյան հաէպիլիր:

Նէ զէման ճան կիւնտա իլէ լէ-քէլէնմիշ իսէ իգրար իլէ սաքին միւ-թէլա՛ա վէ տու՛տտա տէվամ էթաի-յիմիզ թագաւիրաէ, կիւնէշին ըշըզ-նըն գարանլըզ օտայա նուֆուզ էթ-տիյի կիպի գալպաէ Ա՛ն հուզուրընը տէրք հաէպիլիրիլ: Պու հուզուրա տաւմա միւթթալի օլմայապիլիրիլ, ֆադաթ հիսս օլուհմազ պիր թարգտա օ պիլիմ հէփ ամէլլէրիմիլ իւզէրինէ թէէսիրինի իշլէտիր: Օ՛հ, եիւք նէ՛ գատար սա աղըր օլսա սնը թաշըմա-լըսըն: Փէտէրին կէօրէն նազարը թանթընտա օ աղըր եիւք տէրհալ խաֆիֆլէնմէ՛զ մի:

Ալլահ հազընտա օլսն միւթէլտա աալա օսանճ վէրմէզ, իմաի սնը նի-շի՛ւն պէրաէվամ իճրա էթմէյէլիմ: Ալլահն թանթը նազարընտա՝ թիթ-րէմէյէրէք վէ պիլա խաֆվ իլէրի կիթ, մէսրուր օլմագտան, սէվմէքաէն իւմիւտ էթմէքաէն վէ հայաթընը թաթլըլանտըրան հիշ պիր շէյի կէօ-նէնմէքաէն գօրգմա:

Պիր վալիաէ քէնաի էվլաաընըն մէսէրլէթինտէն քէյֆ առլաաուղը կի-

պի Ալլահ պիլիմ սէվինճ վէ ճիւ-պուշըմըգտան աալալը էօյլէ քէյֆ հիսս էտէր:

Ալլահն իրաաէթինէ հէր նէփ զըտա իսէ օ շէյ Անր մէյուա վէ սանա զիյան իրաա էտէր, հալընըզ պու շէյ-տէն գօրգ: Բուհունը լէքէլէյէն թէ-սալվուրաթտան, գալպինի միւզթա-րիպ էտէն արգուլարտան ֆիքրինէ զա՛տֆ կէթիլին վէ սէրամէթիլի իլա-լալ էտէն չօլ նախօշ մուամէլլէրաէն իճթինապ էյլէ:

Հէր նէ շէյի քի Ալլահ սէնտէն տիրիլ էթմէյի միւնտաիպ կէօրիւթօր օնու աալա արգուլաաա: Ալլահ սէնին հանընտա տուրաազ գուսուրլարընը թազմին հաէճէք, լազըմ օլսն շէյլէրի թէտարիք էտալ միւսթահազըն օլմա-յան թէքտիր վէ թէվպիխաէն աալալը տէօքաիւյին կէօզ հաշարընը սիլէ-ճէք: Պէօլէ զէմանլարտա սէնին հափա-ճազըն շէյ պու աըր, կէօզլէրինի գա-վալըպ քէնտինի թէֆթիլ էթմէք վէ հալաշճա, ճեա Բապպ պանա հարաըմ էթ» տէմէք տիր:

Ալլահն սանա սէօյլէյէն սէսինի իշի՛թմէյօրմըսըն: Աճա՛իպ շէյ, նէ զէ-ման Օ՛ «Պու շէյի թաշը իշթէ պէն սանա հարաըմ էթմէք իշիւն հանըն-տա աուրույօրմա» տէր իքէն Անըն պու աըգուսընը րէ՛տա էտիյօրսըն: Էյէր Օ՛ «Սէնի հօրան պու իշի հարըմ սա՛տթ տահա տէվամ էթ» տիյօր իսէ օ իշի պրագըյօրմըսըն: Օ նէ զէման «հափմա» տիյօր իսէ, անը հափըյօր-մուսըն: Էյէր Օ՛ «Իթա՛տթ հօլընտան պիլիլիքաէ կիաշլիմ» տիյօր իսէ, սէն «խայր» ճէվապընը մը վէրիյօրսուն: Օ՛հ, հէր եէրաէ, հէր հալ ու քէյֆիլէթ թանթընտա Իլահի հուզուրըն հազըն օլտուղու հիսսիլլէ հաշամագ նէ՛ ճէլիլ պիր հալ աըր:

ԵՐԵՑ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ ԿՐՕՆԱԿԱՆ ԱԾԽԱՐՀԷ

Փորձ անմահութեան վրայ. — Ամերիկեան քերթ մը կը գրէ քէ միջխառստեր Վանսքրայիք ժամանակին երկու ֆուկիս միջինն տղարի իր շինել տուած մէկ ապարանքը՝ Մր. Ճեյնըս Պ. Շաֆր ծախու առած է 350 հազար տղարի, իր հետեւորդներուն «Սիրոյ նուէր»ներովը եւ զայն միջմած է «Խաղաղութեան նաւահանգիստ» նոր անունով մը: Մր. Շաֆր նոր աղանդի մը հիմնադիրն է որ խառնուորդն է «Գրիսչըն Սայենս» եւ անոր նման մոլորութիւններու: Սոյն աղանդին մարդիկը զիրար կը բարեւեն «խաղաղութիւն» քերով: Հետեւորդներ սարի ու կիս կ'աշակերտեն Շաֆրին որպիս «Ճշմարտութեան ուսանողներ» եւ շրջանաւարտ կ'ենեն իր «Վարդապետ Բնագանցութեան»: Որքան անդամ ունենալին չեն քեր, ասիկա գաղտնի կը պահեն: Անցեալ տարի Շաֆր կը յայտարարէ քէ՝ եզակի նմախորձ մը տեղի ունենալու վրայ է: Սոյն նախախորձը որդեգրուած եռամեակայ ձին անունով երախայի մը վրայ կը կատարուի: Այս տեղեկութիւնները տուող քերքը ձինին պատկերն ալ դրած է, այնպիսի որ իրական է, եւ մեր հասկցած լեզուով «ձին» մը չէ: Փորձը սա՛ է. — Գոհրիկն ձին գերծ պիտի պահուի «սանդիչ խորհուրդներէ»: Երբ անոր միջքը աչպիսի պահուի անվար վնասաւար տարրէն (սկս մեղքէ), անիկա երեք պիտի չենոնի: Չէ՞ որ ըստած է քէ՝ «խախտուելիք վերջին քննակին մահ է», Շաֆր կը խորհի քէ ձին պիտի յաջողի մահը խախտելու մէջ . . . : Մեր ընթերցողներէն կը խնդրուի սպասել արդիւնքին այս պատմերիկեան փորձին:

§ «Եռեակորս Փրես»-ի Ծինն քողքակիցին եկած տեղեկութեան համաձայն Ռուս պատերազմական զորիներէն շատեր մահեցան առայ եւ ետք կը խաղաղեցան: Անոնք կ'ըսեն քէ իրենք հաւատացեալ

ֆրիստներ են, սակայն Օրթոսոֆս եկեղեցին չեն կրնար յանախել, որովհետեւ այնտեղ արձանագրուողներուն վրայ ծանոթ կը դրուի կառավարութեան կողմէ: Եւ որովհետեւ իրենք չեն կրնար վնասել աչ ծանոթ հարկը կ'արգիւտին հոգեւոր պաշտանուններու մասնակցելի: Մեծաւ մասամբ անոնք զիպացի են, եւ ո՛չ կարգաւ եւ ոչ ալ գրեւ զիսեն: Կը յայտարարեն քէ՝ Համայնաւար կուսակցութեան անդամ չեն:

§ Գերմանիոյ նախկին կայսրը եւմարիս ֆրիստներէ մըն է: Այսպիսի կը հարցնէ անգլերէն քերթ մը եւ կը պատասխանէ. — Երբ տակաւին իշխանութեան գլուխ կը գտնուէր, արքայական զօրանալին պաշտօնականներուն իր խօսքը ուղիւնով կ'ըսէ. «Ճշմարիտ ֆրիստներ են ըրալու հասար պիտի է որ ձեր վրաստութիւնը դեմք Բրիտանիա ֆախի արեւան վրայ»: Կը յաւանք որ, կը քարէ քերքը, իր իսկ հաւատքը այս հիման վրայ հաստատուած է:

§ Կ'ըսուի քէ այսօր աշխարհի բնակչութեան 70 առ հարիւրը պատերազմի մէջ է: Տերք մեղացածը պահէ աչ փորձակէն:

§ Ըստ Ամերիկեան կաթոլիկ քերթ մը անունած լուրին, երբ Նացի պաշտօնականներ Պալմարիոյ զիպերէն մեկուն մէջ պարեմաստն կը բաժնէին, Թերեզու Ի. իւմէն անունով կին մը կը մերժէ ընդունիլ որ եւ է պարեմաստն, յայտարարելով՝ քէ ինքը պիտի չունի ո՛չ հացի, ո՛չ կարագի, ո՛չ հաւկիթի եւ կերակուրի: Յիշեալ կինը աշտմ 41 տարեկան է եւ 12 տարի ի վեր բան մը կրնա չէ: Կաթոլիկ քերքը կը հաստատէ քէ լուրը ճշմարիտ է:

Եթէ անքողք գերմանները զիսեան տուեց ունեւոր ասրեւոր գաղտնիքը, պաշտակիցներու պոփաւը զուր աշխատանք մըն է . . . :

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Վեր. Վարդան Ս. Պիլեգիբեան, Ամերիկայէն, զնահասական նամակով մը հինգ տոլար նուէր մը ղրկած է «Աւետարանի Զայն» ի Ֆոնսին:

Եղբայր մը Գահիրէէն ետէ՛ք տարբեր հասցէներու մէջ մէկ տարուան «Աւետարանի Զայն» կը նուիրէ:

Խոբագրութիւնս կը յայտնէ մասնաւոր շնորհակալութիւն, յարգելի նուիրատուներուն:

ՍՏԱՅՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՇՆՈՐ ՀԱՅ ՅՕՂԵՐ», տարեգրքի 2. Տարի, պատրաստած Եղբ. Լ. Ա. Սխնեանի կողմէ: Կը պարունակէ 80 սեղմ էջեր, հետաքրքրական բովանդակութեամբ, կ'արժէ կարդալ: Դիմել հեղինակին

AMERICAN PRESS

BEYROUTH (Liban)

«ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՐ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ», հրատարակութիւն Վեր. Է. Էլ-մանանի: Իր տեսակին մէջ եզակիւն, որուն համար մեր յարգելի բարեկամը խնայած չէ ո՛չ ժամանակ, ո՛չ կորով եւ ոչ ալ դրամ: Ինքն հետոս երաժիշտ մըն է նաեւ. եւ կրցած է զանազան աղբիւրներէ հաւաքել, բարգմանել եւ խմբագրել այն հոշակաւ գործը որ կը բաղկանայ 581 շնորհալ երգերէ. եւ որ զոհացում կու տայ միակզական թե՛ անգլիախօսներուն, թե՛ հայախօսներուն եւ թե՛ քրիստոնէներուն: Ջերմօրէն կը յանձնարարեմք զայն եկեղեցիներուն եւ մեր շնորհալներուն: Դիմել է 2 ½ Տոլար. փոստի ծախար ապագորդին վրայ: Դիմել՝

Rev. E. E. ELMAJIAN

1686, Beverly Drive,

Pasadena, Calif. U. S. A.

ԲՐԻՍՏՈՍ ՄԵՐ ՄԻՋՆՈՐԴԸ, 304 էջ,

Դիմել՝ 10 Ե.Դ., Սուրիա՝ 10 Ֆրանկ, Ամերիկա՝ 75 Սենթ

Սոյն հոգեւունջ գիրքին համար դիմել հեղինակին՝

Rev. THEODORE Y. DAGHLIAN

Armenian Evangelical Church

American Mission Building — CAIRO, Egypt.

ԹԵՐԹԻՍ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆՆ Է

Եգիպտոս՝	25	Ե. Դ.
Ամերիկա՝	1 ½	Տոլար
Ֆրանսա եւ Սիւրիա՝	30	Ֆրանկ

Դիմելի ուղեւորով մեր հայրենակիցներէն ոմանց նիւթական անձուկ վիճակը, յօժար ենք այդպիսիներուն զեղչեալ գնով մը ղրկել թերթը, եթէ առ այդ մեզի իմացենք անձամբ կամ մեր գործակալին միջոցաւ: